


Ե Կ Ե Ղ Ե Յ Ի
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ց



ՆՈՐ ՇՐՋԱՆ — ԹԻ Է
ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

	Էջ
1. Աւանդութիւն Հայաստանեայց Եկեղեցոյ . — Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ .	193
2. Քահանայական Անդրանիկ Քարոզ .	204
3. Կրօնական Դաստիարակութիւն . — Մկրտիչի Արքեպիսկոպոս .	215
4. Քերթուած . — Յիսուս Որդի .	217
5. Թղթակցութիւն . — Նանակ Աւերիկայի .	219
Նանակներ Պարսկաստանէն .	219
Նանակ Կ. Պօլսէն .	200
Նանակ Զաւայի .	222
Նանակ Զմիւռնիայի .	223

Հանդիսիս բաժանորդագինն է ամեն
 տեղի համար տարեկան 4 Շիլինգ կամ 5 Ֆրանկ,
 վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Ֆրանկ քղթասարաւ .

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան
 վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել
 առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

ARMENIAN RECTORY,
 Upper Brook Street,
 MANCHESTER.

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

Ա Մ Ս Ա Ք Ե Բ Փ

Կ ր օ Ն Ա Կ Ա Ն Ե Ա Ս Տ Ո Ւ Ա Մ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ Ե Ա Ռ Ն Տ Ե Ա Ռ Ն Մ Կ Բ Տ Ձ Ի

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց

Թ Ի Ի 7

Ն Ո Ր Շ Բ Ձ Ա Ն

Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Բ 1900

Ա Բ Ա Ն Գ Ո Ւ Բ Թ Ի Ի Ն

Հ Ա Յ Ա Ս Տ . Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ

Ս . Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ .

1. Ծնունդ եւ Մանկութիւն Գրիգորի. — Մեր Եկեղեցին ի սկզբանէ անտի ընդունած եւ հաստատած է Ազաթանգեղոսէն եւ յաջորդ ազգային պատմիչներէ աւանդեալ պատմութիւնն ի մասին սերնդեան եւ ծննդեան Սրբոյն Գրիգորի: Շարականը կ'աւէ.

«Հրաշափառ Աստուած եւ միշտ բարեխնամող. որ յառաջգիտութեամբ զփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ. ի Պարթեւական մեղապարտ ազգին լուսաւորիչ մեզ շնորհեցեր»:

Աղեքսանդր Մակեդոնացոյ աիրապետութեան շնորհիւ ամբողջ արեւելեան նախկին պետութիւններ միացուած էին, ընդ որս եւ Պարսկաստան, Հայք, Մարք եւ այլն. եւ Սելեւկիացի կամ Մակեդոնացի կուսակալաց կամ փոխարքայից ձեռք կըկառավարուէին: Որքան ժամանակ Մեծն Աղեքսանդր կենդանի էր կամ նորա յաջորդք առաւել կամ նուազ ոյժ եւ ազդեցութիւն ունէին աշխար-

հալարութեան մէջ, այդ հպատակ ազգեր կամայ ակամայ հնազանդեցան: Բայց յամի իբր 246 նախ քան ըզ-
 Քրիստոս, երբ Սելեւկիացւոն զօրութիւնը օր ըստ օրէ
 տկարանալու վերայ էր, Պարթեւայ ազգէն իշխան
 ոմն Արշակ անուն ապստամբեց Սելեւկիացւոց դէմ
 եւ առանձին անկախ թագաւորութիւն հաստատեց
 Քուչանաց երկրին մէջ, որոյ գլխաւոր քաղաքն էր
 Բահլ: Այս Արշակի տոհմային անունէն իւր հպատակ
 Պարսիկ եւ այլասեռ ժողովուրդք Պարթեւք կոչուեցան, եւ
 երբեմն եւս Արշակայ աթոռանիստ Բահլ քաղաքի ա-
 նուամբն՝ Պահլաւունիք: Արշակ եւ իւր Պահլաւիկ կամ
 Պարթեւ յաջորդներ հեռզհետէ տարածեցին եւ հաստատե-
 ցին իւրեանց իշխանութիւնն համօրէն Պարսկաստանի եւ
 շրջակայ երկրաց վերայ: Մասնաւորապէս Արշակայ թոռն՝
 Արշակ Բ. մեծապէս բնդարձակեց Պարթեւական պետու-
 թիւնն, եւ ի Հայս դիմելով՝ յազթեց Հայոց վերջին
 կուսակալին, եւ իւր եղբայրն Վաղարշակ Հայոց անկախ
 թագաւոր կարգեց: Այսպէս սկսաւ Հայոց Արշակունեաց
 հարստութիւնը Պարթեւական կամ Պահլաւիկ զարմէն, որ
 ինչպէս ի Հայս Արշակունի անուամբ, նոյնպէս եւ ի
 Պարսս Պահլաւիկ կոչմամբ շարունակեց մինչեւ երկրորդ
 դարու սկիզբն, երբ Արտաւան կրթագաւորէր Պար-
 սից վերայ, եւ ինորով Ա. կ'իշխէր ի Հայս: Յամի
 226 Արտաւանայ նախարարներէն մին՝ Արտաշիր ա-
 նուն ապստամբեց իւր թագաւորի դէմ եւ պատերազմու-
 լով ընդ նմա՝ սպանանեց զայն եւ նորա աթոռը գրաւեց:
 Իսկ ինորով Հայոց արքայ՝ վշտանալով իւր տոհմակցի եւ
 բարեկամի պարտութեան եւ սպանման վերայ, յափշտակիչ
 Արտաշրի դէմ պատերազմի ելաւ եւ զայն Պարսկաստանէն
 վանեց եւ շատ տարիներ զայն հալածեց: Ատրպատական
 զաւառն սեփականելով, Դավրէժ (այսինքն, Դա Կ Վրեժ)
 քաղաքը շինեց, եւ բնաւ թոյլ չտուաւ որ Արտաշիր հան-
 գիստ առնու կամ իւր յափշտակեալ թագաւորութիւնը
 վայելէ: Արտաշիր անկարող զգալով այլ եւս յայտնի
 պատերազմաւ ինորովին դէմ դնել, նենգութեամբ զայն
 սպանանել կըրիորհի, եւ կըրիտտանայ՝ տալ զինորովն
 սպանողին Քուչանաց երկիրն եւ Պարթեւական առանձին
 թագաւոր շինել զնա: Նախարարներէն մին, որոյ անունն
 էր Անակ, եւ Պարթեւաց արքայական ցեղէն էր, ցանկա-
 նալով իւր նախնեաց պետութեան տէր լինել, յանձնառու

եղաւ Արտաշրի նենգութեան գործիք դառնալ . եւ իւր համայն ընտանեօք գաղթեց Պարսկաստանէն դէպ ի Խոսրովու արքունիքն ի Վաղարշապատ , կեղծելով իբր թէ Արտաշր զինքն կըհալածէ Պարթեւ ցեղէն լինելուն համար . եւ այսպէս Խոսրով ի համակրանք կըչահի , որ զայն մարդասիրարար կըհիւրընկալէ իբրեւ իւր ազգական : Այլ Անակ ժամանակ մի Խոսրովու հիւր լինելով եւ նորա մտերմութիւն կեղծաւորարար ձեռք բերելով՝ մի օր որսի միջոցին զթագաւորն սպանեց եւ անմիջապէս փախչելով դէպ ի Պարսից սահմանադուխն , Երասխ գետի մօտ Խոսրովու կատաղի զօրաց հանդիպեցաւ որք հրաման ստացած էին հողին աւանդող թագաւորէն՝ Անակայ ախող ընտանիքն եւ ազգն կործանել ջնջել : Անակ՝ զօրաց ձեռքէն ազատուելու նպատակաւ , ինքզինքը գետը ձգեց , լողալով գետի միւս կողմն անցնիլ կաշեհնալու յուսով , այլ հեղձամահ կորաւ : Խոսրովու զօրքերն , ի վրէժխնդրութիւն , Անակայ համայն ընտանիք եւ զաւակներ սրախողխող սպանին , ի բաց սուտալ մի նորածին մանուկ որ Անակայ պանդխտութեան միջոցին ի Վաղարշապատ ծնած էր իբրու յաբի 257 : Այդ մանկան սանտուն Սոփիա ընդ նախախնամութեամբ Աստուծոյ ազատեց զայն որ սահմանեալ էր Հայոց ազգի Լուսաւորիչ հանդիսանալ , ըստ որում մեր Եկեղեցին կըգոչէ ի ասոնի նորա . « Ի Պարթեւական մեղապարս ազգէն Լուսաւորիչ մեզ շնորհեցեր » :

2. Սոփիա , Բուրդար եւ Երաղի խնամակալ Գրիգորի : —

Երբ կըմտածենք որ ընդ նախախնամութեամբ Աստուծոյ Ս, Գրիգորի մանկութեան պահապան հրեշտակն եղաւ նորա սանտուն Սոփիա , որ նորա կեանքը փրկեց , նորա մանկութեան վերայ խնամով հսկեց , քրիստոնէաբար մեծցուց զայն եւ անուզղակի մասնակեց եղաւ այն Լուսաւորութեան գործին որով իւր հոգեորդին կամ իւր պաշտպանութեան յանձնուած որբացեալ մանուկն Գրիգոր սահմանեալ էր մի մեծ երկրի ու ազգի կրօնական եւ ընկերային դրութիւնը յեղաշրջելու եւ բարեփոխելու . երբ այս ամենը կըմտածենք , կըզարմանամք որ մեր նախնիք Սոփիայի անուան սոսկ յիշատակութեամբ եւ եթ չառացեր են առանց յերեւան բերելու նորա այն բարձր արժանիքն եւ քրիստոնէական գերազանց յատկութիւններ զորս իւր ձեռնասուն հոգեզաւակի վերայ կըտեսնենք : « Ի պտղոյ

նոցա ծանիջիք զնոսա . » եւ մեր Լուսա որչէն կըրնանք մակաբերել արժանիքն այն սուրբ կնոջ որ զկնի մահուան Ոգոհեայ՝ Լուսաւորչամայր լինելու կոչուեցաւ :

Մովսէս Խորենացի այսպէս կ'աւանդէ (Պատմ. Հայ. Բ 90) Սոփեայ պատմութիւն : — Պարսիկ ազնուական ոմն Բուրդար անուամբ Կեսարիոյ կողմերը ճանապարհորդելով եւ Կեսարիա քաղաքի մէջ առ ժամանակ մի դեղերելով՝ կը ծանօթանայ անդ բնակուող մի քրիստոնէայ մեծատուն անձին հետ որոյ անունն էր Եւթաղիոս , եւ ունէր մի քոյր Սոփիա անուամբ : Բուրդար որ հաւանօրէն քրիստոնէացաւ , կ'ամուսնանայ Սոփեայ հետ , եւ քիչ վերջն , յայտնի չէ թէ ի՛նչ նպատակաւ , թերեւս Ս. Աւետարանն Պարսից մէջ քարոզելու համար , իւր կնոջ եւ աներորդ ռոյն հետ մէկ տեղ դէպ ի Պարսկաստան կըճանապարհորդեն : Վաղարչապատու մէջ կըհանդիպին Գրիգորի ծնողաց պատահած արկածի միջոցին , որով Աստուծոյ թելադրութեամբ զմանուկն կ'առնեն կըփախչին ի Կեսարիա , Սոփիա մայրական պաշտօն կատարելով դիեցիկ մանկան համար : Յայտնի չէ թէ Բուրդար եւ Սոփիա ինքեանք զաւակ ունեցա՛ն , բայց ծնողական սիրով խնամք տարան Գրիգորի վերայ , քրիստոնէական ուսմանց մէջ կըթեցին զնա , եւ երբ տարիքն առաւ՝ ամուսնացուցին Դաւիթ անուամբ հաւատացելոյ Մարիամ դստեր հետ , յորմէ ունեցաւ երկու որդի , Արիստակէս եւ Վրթանէս , որք ինչպէս պիտի տեսնենք , յաջորդաբար Հայ . Եկեղեցին հովուեցին զկնի Ս. Գրիգորի :

Ափսո՛ս որ բազմաթիւ նուազ կարեւոր սրբոց մէջ՝ մեր Լուսաւորչի սրբութեան պատճառ եւ մասնակից եղող Սոփիա եւ իւր եղբայրն Եւթաղիոս եւ նորա ամուսինն Բուրդար անյիշատակ մնացած են մեր Տօնացոյցի մէջ :

Մի ուրիշ խորհուրդ եւս կըդրդէ քրիստոնէի միտք այս առթիւ . այն է՝ թէ Ս. Լուսաւորիչ արքայասպան Անակայ որդին էր : Ի՛նչ ահռելի հակադրութիւն աշխարհի եւ մարդոց սովորական մտածման որով , չնայելով որ մենք ամենքս՝ արդէն բնութեամբ զառածեալ նախամարդոյն Ազամայ զաւակունք եմք , կըսիրեմք մեր նախահարց առաքինութեամբք եւ «ազնուականութեամբք» պարծիլ : Կարծես թէ մեր հպարտութիւնն յանդիմանելու համար է որ Աստուած յաճախ «զյիմարս աշխարհիս ընտրեաց , զի յամօթ արասցէ զիմաստունս . եւ զտկարս

աշխարհիս ընտրեաց Աստուած , զի յամօթ արասցէ զնորս ,
 եւ զանտոճմս աշխարհիս եւ զարհամարհեալս ընտրեաց
 Աստուած եւ զոչինչսն , զի զէսն իմն խափանեցէ» : Եւ
 այսպէս արքայապան Անակայ որդին՝ սպանեալ թագա-
 ւորի որդւոյն եւ իւր ժողովրդեան երկնաւոր Թագաւորի
 պատգամը բերելու կը պատրաստուի , ինչպէս մեր Եկեղեցին
 եւս գրեթէ պարձանօք եւ գոհութեամբ իմն կ'ակնարէ այս
 պարագային վերոյիշեալ շարականին մէջ . « Ի պարթեաւ-
 կան մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր » : (*)

3. Գրիգորի Կրթութիւն : — Ինչպէս տեսանք , Գրիգոր
 իբրեւ մանուկ կապազովկիոյ՝ ետարիա քաղաքը տարուե-
 լով՝ իբրեւ քրիստոնեայ կրթուեցաւ եւ մկրտուեցաւ : Այն
 միջոցին Կետարիա քրիստոնէից գլխաւոր կեդրոնն էր ,
 եւ Նախկին Եկեղեցւոյ անուանի հայրերէն ոչ սակաւք
 կամ այդ քաղաքի մէջ ծնած եւ մեծցած էին , կամ անդ
 պաշտօնավարած էին : Մի այսպիսի քաղաքի մէջ բնա-
 կանաբար Ս. Գրիգոր ամենալաւ առիթն ունեցաւ իւր
 աստուածատուր ձիրքերն՝ արժարժելով՝ քրիստոնէական
 կրօնի վարդապետութիւնն հիմնովին ուսանելով՝ Քրիս-
 տոսակենցաղ վարուց մէջ վարժուելու :

Յայտնի չէ թէ Սոփիա կամ Գրիգորի խնամակալք ի'նչ
 նպատակաւ կը կրթէին զնա . այսինքն , հոգեւորակա'ն
 պաշտօնի համար կը պատրաստէին զայն թէ պարզապէս
 բարի աշխարհական քրիստոնեայ մեծցնելու դիտում
 ունէին : Նախկին Եկեղեցւոյ հաւատացելոց համար
 տարբերութիւնը շատ մեծ չէր : Ամեն հաւատացեալ
 պարտաւոր էր Ս. Աւետարանի գլխաւոր վարդապետու-
 թիւններ եւ օրէնքներ լաւ ուսումնասիրել , եւ ամեն
 քրիստոնեայ , քահանայ կամ ժողովուրդ , պարտաւոր էր
 իւրովսանն աշխատել Ս. Աւետարանը տարածելու հետեւ-

(*) Երեքտասներորդ դարու մէջ ապրող ազգային մատենգիր՝ Յովհան-
 նէս վարդապետ Երզնկացի Ս. Լուսաւորչի վերայ գրուած իւր ներքողական
 ճառի մէջ այսպէս կը գրէ : — « Ի յԱնակայ հօրէ իբր ի փշաբեր Թփոյ հրաներկ
 Յերթս վարդից ի հոտ անոյշ մեզ վերածաղկեալ . յօծից Թիւնալից խայծոցաւորաց
 մեզ Թիւրակէ բժիշկ երեսեալ . ի խնջիւնաց զազարտեսից՝ երվներանգ որակ
 ծիրանոյ ի գարդ կայսերական հանդերձից տուեալ . ի տիրապան հարցն դա-
 ւողաց կենդանաբար հոգւոց պարգեւեալ . արմաւենի քաղցրաբեր՝ արդարու-
 Յեան պտղովք ի փշաբեր անդւոյ վարսագեղ բուսեալ . ի ժանտահոս եւ ի դաւ-
 նածաշակ ծովէ մարգարտոյ յօրինուած ի պէտս արքայական Թագից ընծայեալ .
 յապառաժուս վիմաց քարսնց կարծրութեանց տպապիոն հրափայլ գունով
 գեղեցիկ գտեալ » :

նոսաց մէջ: Հետեւաբար կարող ենք ընդունել (և մեր այս ենթադրութիւնն Գրիգորի յաջորդ գործունէութեամբ, քարոզչական ձրիւք եւ աստուածաբանական հմտութեամբ կըհաստատուի), որ Գրիգոր մի հոգեւորականի չափ կրօնական ուսում եւ կրթութիւն ստացած էր: Սակայն իւր հօր ոճիրն եւ այլ ոճրագործութեան արգիւնք եղող մեծ չարիքն Հայոց երկրի ու ժողովրդեան մէջ՝ զինքն աւելի քաղաքական ասպարէզ կըկոչէին, իւր հօր մեղքը քաղաքական հաւատարիմ եւ բարի ծառայութեամբ քաւելու կըբռնադատուէր քան թէ այլով իւրք:

4. Գրիգոր ի ծառայութեան Տրդատայ: — Ձկնի սպանման Խոսրովու, Արտաշիր յափշտակիչ թագաւորն Պարսից՝ դեմնց ի Հայս եւ Խոսրովու բոլոր ընտանիքն կոտորեց ի բաց առեալ նորա մէկ մանուկն Տրդատ զոր դայեակներն առին փախցրին «ի կողմանս Յունաց», եւ նորա քոյրն Խոսրովիդուխա զոր նոյնպէս շաքաւեցին Արտաշիր ձեռքէն եւ պահեցին ի թագաւորան շատ տարիներ: Պատմութեան մէջ աւանդուած չէ թէ Խոսրովիդուխա ու՛ր եւ ի՛նչպէս մեծցաւ: Բայց զՏրդատ տարան «ի կողմանս Յունաց», կամ աւելի ճիշդ, ի Հռովմ քաղաք, եւ նորա Հայոց արքայորդի լինելն իմացուելով՝ կայսեր հրամանաւ Լիկիանէս կոմսի խնամոց յարձնուեցաւ, եւ այն գարու մէջ իշխանազանց յարմար դասուած ուսմամբ եւ կրթութեամբ վարժուեցաւ: Անգլիացի նշանաւոր պատմաբան Գիբբըն այսպէս կըգրէ Տրդատայ պանդխտութեան մասին: — «Այս պանդխտութենէն Տրդատ այնպիսի օգուաներ քաղեց զորս նա երբէք չպիտի կարենար քաղել Հայոց գահուն վերայ, այսինքն, կանուխէն ճախորդութեանց ենթակուեցաւ, մարդաճանաչութեան եւ հռովմէական կանոնաւոր կրթութեան մէջ վարժուեցաւ: Իւր երիտասարդութիւն քաջութեան գործերով փառաւորեց, եւ ի հանդէս բերեց անզուգական ճարտարութիւն, որպէս եւ գորութիւն ու արիւթիւն ամեն զինուորական կրթութեանց մէջ, եւ մինչև իսկ ոլիմպական նուազ պատուաբեր խաղերու մէջ»:

Գրիգոր, որ իւր դայեկէն տեղեկացած էր «հայրենի գործոյն որ եղևալն էին», այս միջոցին Կեսարիա թողեց զնաց ի Հռովմ, եւ առանց իւր ազգատոհմի պարագայներն յայտնելու՝ մտաւ ի ծառայութիւն Տրդատայ, ցանկանա-

լով այդու մասամբ իմն քաւել իւր հօր մեղքն եւ յուսալով օր մի նպաստել Տրդատին վերահաստատելու Արշակունեաց թագաւորութիւնն զոր իւր հօր դաւաճանութեամբ քանդուած եւ օտարի ձեռք ինկած էր :

Վերջին տարեներս մեր ազգային պատմութեան հետազօտողք Տրդատայ վերադարձի թուական ի Հայս շատ աւելի կանուխ կրգնեն քան զոր մինչ ցարդ ընդունուած էր . նոյնպէս Գրիգորի՝ Տրդատայ ծառայութեան մտնելն ոչ թէ ի Հոռով կամ ի կողմանս Յունաց կրճամարին լինել , այլ նոյն իսկ ի Հայս : Ազգային քաղաքական պատմութեան այս մութ կէտն մեր եկեղեցական պատմութեան համար շատ մեծ կարեւորութիւն չունի : Միայն այսքանը պէտք է մեզ գիտնալ որ քրիստոնեայ մեծցած Գրիգորն ազգասիրական նպատակաւ Տրդատայ ծառայութեան մէջ կրմանէ :

Մովսէս Խորենացի , եւ այլք պատմիչք Հայոց , կ'աւանդեն թէ Գրիգոր կեսարիայէն մեկնելէն յառաջ իւր Մարիամ կնոջմէն բաժանուեցաւ « ի կամաց երկոցունց » , Մարիամ կրօնաւորաց վանք մտնելով իւր Վրթանէս որդւով հանդերձ : Եթէ այս « բաժանումն » արդէն չորրորդ եւ հինգերորդ դարուց մէջ կրօնաւորաց ամուսնական կենաց դէմ ունեցած տճաճութեան արտայայտումն չէ քան թէ իրական գիպաց յիշատակ , ապա ուրեմն՝ ուրիշ կերպ կարելի չէ բացատրել զայս բայց եթէ այն բաժանումն համարել որով մի այր ճամբորդութեան առթիւ կրքաժանուի բնականաբար իւր կնոջմէն վերստին հանդիպելու եւ միասնալու գիտմամբ : Քաղաքական պատճառ սոսլ այս բաժանման , իբր թէ Տրդատայ ծառայութեան մտնելու համար , խնդիրը քաջքջել կընշանակէ : « Որ Աստուած զուգեաց մարդ մի մեկնեցցէ » օրէնքն նոյնքան սուրբ էր Ս. Լուսաւորչի համար որքան մեզ համար որ այնքան եւանդեամբ կըմաքառինք ամուսնալուծութեան դէմ : Հաւանականութիւնն այն է որ Գրիգորի կինն Վրթանսի ծնուելէն մի քանի տարի վերջ , կամ Գրիգորի ի Հոռով եւ յարքունիս Տրդատայ գտնուած ժամանակ , մեռաւ :

5. Նահասակութիւն Գրիգորի : — Պատմութեան մէջ մանրամասնութիւնք կըպակասին Գրիգորի գործունէութեան մասին առ Տրդատաւ : Յայտնի չէ թէ նորա մասնաւոր պաշտօնն ի՞նչ էր . չենք կարող ընդունել թէ նա պարզ

սպասահարկութեան պաշտօն ունէր Տրդատայ մօտ իբրև պալատական սենեկապետ, ինչպէս բանասէր ոմն Կ'ենթադրէ: (*) Գրիգորի պէս ուսեալ եւ յունական դպրութեամբ կրթեալ անձն մը՝ շատ աւելի օգտակար կարէր լինել իւր արքային կամ հայրենեաց թագաժառանգին քան թէ պարզ սպասահարկութեամբ: Զիարդ եւ իցէ, երկար տարիներ Տրդատայ մօտ մնալով, հաւատարմաբար եւ որդիարար ծառայելով նմա՝ հետզհետէ Տրդատայ սիրտը գրաւեր էր, յորմէ խոստում ստացած էր բարձրագոյն պատուոյ եւ իշխանական փառաց բարձրանալու: Տանջանաց ենթարկելէն յառաջ Տրդատ կ'ասէ Գրիգորին «Գիտասջիր զի ապախտ արարեր զվաստական զոր ինձն վատակեցեր, որում ես վկայ եմ: Արդ փոխանակ կենացն զոր պարտ էր առնել քեզ, յաճախեմ քեզ նեղութիւնս, եւ փոխանակ պատուին՝ անարգանս, եւ փոխանակ բարձ տալոյ եւ յառաջ ձգելոյ՝ բանդ եւ կապանս»: — Ագաթ. էջ 40 (Թիֆլիս): Եւ երբ յամի 287 Տրդատ Դ թողլէ տիարնոս կայսեր ձեռնառութեամբ կրվերադառնայր իւր հայրենի աթոռն տիրելու, ընականաբար զԳրիգոր եւս միասին տարաւ: Այդ արչաւանաց մանրամասնութիւնք մեր ազգային քաղաքական պատմութեան կրպատկանին, աստ կրկնելն մեր նպատակէն դուրս է: Այսքան կրբաւէ ասել որ Տրդատ յաղթութեամբ մտաւ ի Հայս եւ Պարսկական զօրքերը վանեց եւ իւր սեփական թագաւորութիւնը հաստատեց մեծ խելամոտութեամբ եւ քաջութեամբ: Մեծ յաղթութիւնը տանելէն վերջ, Տրդատ մեծաւ բազմութեամբ զօրաց գնաց յեկեղեաց գաւառն ի գիւղն Նրիզայ, ուր հեթանոս Հայոց ամենէն նուիրական տաճարը կրդտնուէր, յորում զեակողուած էր Հայոց երկրի կարծեցեալ պաշտպան եւ խնամակալ Անահտայ պատկերն կամ արձանն, եւ մեծ հանդիսով գոհութեան զոհեր մատոյց իւր ստացած յաջողութեանց համար: Յընթացս այդ աւուր հանդիսաւորութեան, Գրիգորի քրիստոնեայ լինելն յայտնուեցաւ: Տրդատ ճաշի միջոցին կըհրամայէ Գրիգորին «զի պսակս եւ թաւ ոստս ծառոց՝ նուէրս տարցի բազնին Անահտական պատկերին»: (* *) Հաւանօրէն Գրիգորի նա-

(*) Տես ԼՈՒՄԱՅ, Ե.Տարի, գիրք Բ. էջ 6:

(* *) Դարձեալ սխալ է ենթադրել, ինչպէս վերոյիշեալ բանասէրն ԼՈՒՄԱՅ ի մէջ Կ'ենթադրէ, թէ «Գրիգորի քրիստոնէութիւնը պէտք էր որ Տրդատայ անձանօթ մնացած լինէր»։ քանզի, թող որ Ագաթանգեղոս բացարձակ-

խանձորդներէն մին այս միջոցին որեւէ կերպիւ նկատու-
լով Գրիգորի անտարբերութիւնն առ դիս, կամ զոհի ա-
րարողութենէն բացակայ գտնուիլն, գաղտնապէս կ'իմաց-
նէ Տրդատին, որ իւր կողմանէ այդ առթիւ փորձի կ'են-
թարկէ զնա, որով զառաջինն կ'իմանայ որ «նա ոչ առ-
նոյր յանձն պաշտօնատար լինել դիցն երկրպագութեան» :
Տրդատայ ստացած հոովմէական եւ յունական կրթութեան
եւ զգացմանց հանդէպ, դից եւ չաստուածոց անարգելն եւ
անպատուելն, կամ, ինչ որ նոյն բան կըհամարուի, սոս-
կապէս չպաշտել ու չյարգել, մարդոյս ունեցած բոլոր ար-
ժանիքն եւ գովելի յատկութիւններ կըջրէ եւ առ ոչինչ
կըզբէ, մանաւանդ երբ անարգանքը մի այնպիսի դիցու-
հւոյ դէմ կ'ուղղուէր որ, ըստ կարծեաց Տրդատայ, Հայոց
երկրի եւ ազգի պաշտպան եղած էր եւ իւր նախնեաց
թաղաւորութիւնն յաղթութեամբ վերահաստատած էր :
Տրդատ իւր բազմամեայ պանդխտութեան միջոցին ի
զրուես կայսերաց, ի միջի բազում պիտանի սովորու-
թեանց եւ կրթութեանց, այն դարու հոովմայեցոց սնա-
պաշտութիւն եւ զուղղութիւն եւս ժառանգած էր : Նա
սովորեր էր քրիստոնէութեան վերայ նայիլ նոյն աչքով
որպէս հոովմայեցիք կընայէին, եւ նոյն կերպով վարուիլ
քրիստոնէից հետ որպէս հոովմայեցիք կըվարուէին : Նա
տեսած էր ի Հոովմ թէ որպիսի խիստ օրէնքներ հաստատ-
ուած էին նոցա դէմ, եւ որպիսի՝ անգթութեամբ կըհալած-
ուէին կայսրութեան երկրաց մէջ գտնուող հաւատացեալք :
Նա լսած էր, եւ անշուշտ հաւատացած էր, այն այլանդակ եւ
սոսկալի զրոյցներ զոր չարամիտ հեթանոսք կըտարածէին
ընդդէմ քրիստոնէից . — իբր թէ իւրեանց գիշերային
ժողովներում մի դեռատի մանուկ կըմորթէին եւ նորա
արիւնը կըխմէին ու միսը կ'ուտէին, կամ պետութեան
դէմ ապստամբութիւն կըքարոզէին, եւ խառնակ մծղնէու-
թեամբ կըվերջացնէին իւրեանց գիշերային ժողովներ . —
եւ հաւանօրէն անկեղծօրէն կըհաւատար թէ ոչ մի թա-
գաւոր իւր պարտքը կատարած չէր լինել, եթէ քրիստո-
նեայները չը հալածէր եւ չաշխատէր իւր սահմաններէն
բնաջին առնել զնոսա :

Այս պատճառաւ Տրդատ մեծ վիշտ կըզգար երբ կըտես-

պէս այս միջոցին յայտնուիլն կըվկայէ, անկարելի էր որ Տրդատ իւր հաւա-
տարիմ ծառայի հետ այդքան խստութեամբ վարուէր, եթէ նորա քրիստոնէու-
թիւնն յառաջ քան զայս յայտնի եղած լինէր Տրդատայ :

նէր թէ իւր հաւատարիմ ծառայն Գրիգոր, որ երկարամեայ մերձաւոր մտերմութեամբ իւր սէր գրաւած էր, մի այդպիսի ատելի կրօնի եւ ընկերութեան անդամ է: Հետեւաբար ամեն ճիգ կը թափէր զայն փրկել համողիչ խօսքերով, անցեալ ժամանակի յիշատակութեամբ, մեծամեծ խոստումներով, անելի սպառնալիքներով. բայց իզուր. կարող չեղաւ զԳրիգոր գրգռել իւր երկնաւոր նպատակէն եւ հաստատուն որոշումէն. Քրիստոնեայ եմ, կ'ասէր, եւ քրիստոնեայ պիտի մեռնիմ:

Ուստի զկնի այս երկարատեւ հարցաքննութեանց, Տրդատ իւր սպառնալիքներ ի գործ դրաւ մի ըստ միոջէ, սոսկալի չարչարանաց ենթարկելով զնա: Այն դարու մէջ հռովմէական եւ արեւելեան երկրաց մէջ ծանօթ տասն երկու տարբեր չարչարանքներ ի գործ դրուեցան Գրիգորի վերայ՝ զայն յուրացութիւն բերելու. բայց անկարելի եղաւ որեւէ փոփոխութիւն յառաջ բերելու նորա մտաց մէջ. նա անզրգուելի էր ի հաւատս Քրիստոսի մինչեւ ցմահ:

6. Ս. Գրիգոր ի խոր Վիրապին: — Ս. Գրիգորի չարչարանաց նկարագրութեան պարզ ընթացումն իսկ սոսկում կը բերէ ընթերցողի վերայ: Իւրաքանչիւր տանջանք երբեմն մի քանի օր կը տեւէր, եւ ապա մի քանի օր կը սպասէին որ թերեւս զղջայ եւ զՔրիստոս ուրանայ: Այս դրութեամբ տասն երկու այլ եւ այլ տեսակ չարչարանքներ ի գործ դրուած էին առանց ցանկացեալ արդիւնքն յառաջ բերելու, երբ մի նոր զէպք պատահեցաւ որ զՏրդատ վերջին աստիճան զայրացոյց եւ այլ եւս բոլորովին յուսակտուր արեց Գրիգորի զարձի մասին: Այս միջոցին Գրիգորի Կեսարիոյ նախկին ծանօթներէն՝ Տաճատ ոմն, որ մի անարժան գործ ի համար իւր հայրենիքէն հեռացած եւ ի Կեսարիա սպաստանած էր, իսկ այժմ ի Հայս վերադառնալով՝ իւր աների Արտաւազգ Մանդակունոյ շնորհիւ Աշոցայ իշխան կարգուած էր, թագաւորին իմացոյց որ Գրիգոր արքայասպան Անակայ որդին էր: Տրդատ սաստիկ զայրանալով եւ տեսնելով որ Գրիգոր անզրգուելի է իւր հաւատին մէջ, հրամայեց տանել զնա Արտաշատ քաղաքն եւ անդ քաղաքին մօտ գտնուած մահապարտից համար սահմանեալ խոր Վիրապը ձգել: Այժմեան խոր Վիրապն, որոյ վերայ վանք ու եկեղեցի չի նուած է, Ս. Լուսաւորչի իսկական բանտի կերպարանքը չունի, եւ շատ կը տարբերի Ագաթանգեղոսի նկարագրած

Վիրապէն որ «անհնարին էր խորութեամբ»: Բնականաբար յընթացս դարուց այսպիսի խոռոչներ հողով ու աւալով կըլցուին, եւ հաւանօրէն նոյնը մեր Խոր Վիրապին պատահած է, եւ յետոյ բարեպաշտ անձինք քարուկիր շինութեամբ գուբն ներսէն շրջապատեր են որպէս զի տեղւոյն յիշատակն իսպառ չմոռացուի: (*)

Որքան որ հայ մատենագիրներ Ս. Գրիգորի երեքսասանամեայ բանտարգելութիւն Խոր Վիրապին մէջ հրաշալիաց կարգը կըգասին, — եւ արգարեւ Աստուծոյ հրաշալիք մի է, — դարձեալ աւելի սիրելի է մեզ հաւատալ որ շատ անգամ Աստուած իւր նախախնամական տեսչութիւն բնութեան օրինաց միջոցով կըգործադրէ. եւ եթէ Խոր Վիրապի իրական հանդամանքը գիտնայինք, պիտի տեսնէինք որ մի այսպիսի սոսկալի բանտի մէջ տասներեք տարի սպրեւն թէպէտ եւ յոյժ գոռարին եւ լի նեղութեամբ եւ տառապանօք՝ դարձեալ իսպառ անհնարին չէր: Աստուծոյ մի ուրիշ հոգածութիւն բանտարկեալ Լուսաւորչի համար արդէն աւանդեալ է ի պատմութեան: Արտաշատի մէջ ընակուող մի քրիստոնեայ կին աստուածային թելադրութեամբ ամեն օր մէկ նկանակ կըբերէ կըձգէ Վիրապը, որով Ս. Գրիգոր կըկերակրուի: Միթէ կարելի չէ՞ ենթադրել որ այդ քարաբլրի վերայ գտնուած Խոր Վիրապի մէջ կայր նաեւ մի բնական աղբիւր որ Ս. Գրիգորին խմելու ջուր կըմտակարսրէր: Նոյնպէս եթէ ուշադրութեամբ կարդանք Ագաթանգեղոսի նկարագրութիւն թէ «անհնարին էր խորութեամբ» պիտի հասկանանք որ այդպիսի տարածութեամբ գեանափոր բանդի մէջ գտնուող անձին համար կենաց պայմաններ այն աստիճան չէին պակասեր որքան գուբնն նայողին կ'երեւէր: Բայց եւ այնպէս Աստուծոյ նախախնամութեան հրաշալիքը սկիւյայոսնի կըփայլի աստ. մանաւանդ, երբ կըխորհիմք թէ ինչպէս շատ անգամ մի պարզ հարբուի կամ մրսածութիւն մարդոյս մահուան պատճառ կըլինի, արդարեւ զարմանալի՝ կըգտնեմք երեքտասան ամ անցնելն այդ մութ ու խաւար գգոյն մէջ այն անձին համար որ սահմանեալ էր մեր աղբի մտաց խաւարն փարատելու եւ Ս. Աւետարանի ջահովն լուսաւորելու:

(Շարաշարեղի).

(*) Խոր Վիրապի տեղագրական եւ պատմական նկարագրութիւնը տես Ալիշան, ԱՅՐԱՐԱՏ, էջ 434-440:

ՔԱՂԱՆԱՅԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈՉ

(Խօսեցեալ ի սօնի Կաթողիկէ Սուրբ Էջնիածնի ի Սուրբ Հոգի Եկեղեցւոյ Հայոց Մանչէսթր քաղաքի յաւի 1896 :)

« Ոչխարք իմ ձայնի իմում լսեն եւ ես ճանաչեմ զնոսա եւ զկնի իմ գան. եւ ես տամ նոցա զկեանսն յաւիտեանականս, եւ մի կորիցեն ի յաւիտեան, եւ մի ոք յափշտակեցէ զնոսա ի ձեռաց իմոց »:

Հայաստանեայց Եկեղեցին գեղեցիկ բարեկարգութեամբ Տէրունական և սրբոց տօներն դասաւորել է. այնպէս որ մէկը միւսի հետ սերտ կապակցութիւն ունի և մէկը միւսին խորհրդաւոր նշանակութեամբ կը յաջորդէ: Չատկի Սուրբ Յարութեան տօնին կը յաջորդէ զկնի քառասուն աւուրց՝ Համբարձման տօնն, և Չատկէն յիսուն օր անցած, այսինքն Պէնտէկոստէի տօնին կը կատարուի Սուրբ Հոգւոյն գալլատեան յիշատակն. որ ասել է՝ նոյն կարգաւ կը կատարուին ինչ կարգաւ որ այդ գէպքեր պատմական ժամանակի մէջ կատարուեցին. Համբարձումն Քրիստոսի փրկագործութեան լրումն և պսակն էր. և Հոգւոյն սրբոյ գալլատն՝ իւր սուրբ Եկեղեցւոյ սկզբնաւորութիւնն էր: Չկնի ընհանուր աշխարհի եկեղեցեաց վերաբերեալ այդ ահաւոր տօնը կատարելու՝ այսօր Հայաստանեայց Եկեղեցին կը կատարէ մասնաւորապէս իւր սկզբնաւորութեան տօնն: Թէպէտև քրիստոնէութիւնն Հայոց մէջ Սրբազան Առաքելոց ժամանակէն, կամ լաւ ևս ասել, Քրիստոսի ժամանակէն իսկ կը սկսի, սակայն մինչև Քրիզոստոմ Լուսաւորիչ Քրիստոսի հաւատն Հայաստանի մէջ մի մասնաւոր և շատ չափաւոր կերպիւ ընդունուած էր. Հայաստանի բոլորական դարձն ի քրիստոնէութիւն կատարուեցաւ այն ժամանակ, որոյ յիշատակն կը տօնէ այսօր սուրբ

ԵԿԵՂԵՑԻ :

Եթէ Սուրբ Հոգւոյն գալուստն ընդհանուր եկեղեցւոյ մկրտութեան հանդէսն էր որ զկնի Քրիստոսի չարչարանաց, խաչի և մահուան, նորա հրաշափառ Յարութեան և յաղթական Համբարձման կատարուեցաւ, այս աւուր Կաթուղիկէ Սուրբ Էջմիածնի տօնն ևս Հայաստանեայց Եկեղեցւոյ մկրտութեան տարեգարձն է որ մեր բազմաբախտ հօր սրբոյն Գրիգորի Լուսաւորչի անխոնջ աշխատութեամբ և անտանելի չարչարանօք, նորա երկարամեայ բանտարգելութեամբ Խոր վիրապի մէջ և նորա յաղթական ելանելոյն ի վիրապէն՝ կատարուեցաւ : Այս պատճառաւ Եկեղեցին սուրբ Գրիգոր Լուսաւորչի ելն ի վիրապէն երէկ տօնելէն յետ, այսօր կըտօնէ Հայաստանեայց եկեղեցւոյ կեդրոն և աղբիւր եզող Ս. Էջմիածնի նաւակատիսն :

Եւ յիրաւի մի գեղեցիկ զուգարհպութիւն է որ մինչդեռ մենք այսօր կըկատարենք Ս. Էջմիածնի Կաթուղիկէ Եկեղեցւոյ տօնն՝ Ս. Էջմիածնի և մեր Լուսաւորչի փառապանծ գահին վերայ բազմող շնորհազարգ սուրբ Հայրապետն կըխօսի մեզ հետ այսօր այն կոնդակի միջոցաւ զոր այժմ իսկ կարդացի ի լուր հաւատացեալ ժողովրդեանց : Իբրև քաջ հովիտ՝ այն հեռաւոր կեդրոնէն՝ Այրարատեան լեռների ստորոտէն՝ կըձայնէ իւր ի սփիւռս Անգլիոյ գտնուած Լուսաւորչածին զաւակներին՝ և մերմտաց վրայ աւելի ազգուութեամբ կըտպաւորէ Քրիստոսի այն միսիթարական խօսքերը զոր այսօր այս սուրբ բեմէն կարդացուեցաւ և զոր այս աւուր խորհրդածութեան բնաբան ընտրած եմ : — « Ոչխարք իմ ձայնի իմում լսեն և ես ճանաչեմ զնոսա և զկնի իմ գան . և ես տամ նոցա զկեանսն յաւիտենականս , և

մի կորիցեն ի յաւիտեան, և մի ոք յափշտակեսցէ զնոսա ի ձեռաց իմոց ։

« Ոչխարք իմ ձայնի իմում լսեն ։ ի՛նչ գեղեցիկ օրինակ . ի՛նչքան յարմար համեմատութիւն է հովուի և իւր ոչխարաց միջև եղած՝ յարաբերութիւն՝ Քրիստոսի և իւր հաւատացելոց միջև եղած յարաբերութեան հետ ։

Ինչպէս յայտնի է, ոչխարն մի շատ միամիտ և անմեղ կենդանի է, որ ճարակ գտնելէն՝ իւր քաղցն ու ծարաւն յագեցնելէն զատ՝ ուրիշ շատ քիչ բանի փոյթ կամ հասկացողութիւն ունի ։ Եթէ արօտավայրին մէջ հովիւն զնա չառաջնորդէ, նա խոտ գտնելու ցանկութեամբ իւր քայլերն կ'ուղղէ ուր որ իւր ցանկացեալ բոյսերն կան, առանց որ և է ուրիշ նկատման, առանց վախենալու թէ գուցէ թըշնամույն ձեռքն իյնայ, կամ գուցէ գազանակուր լինի կամ գողի ու յափշտակողի հանդիպի . կամ երեկոյեան մօտենալն տեսնելով հօտէն ու հովուէն չըհեռանայ, որպէս զի գիշերային վտանգների չենթարկուի ։ Ո՛չ . այդ նկատումներն ոչխարի համար չեն ։ Նա եթէ շատ լաւ ոչխար է, միայն մէկ բանի կարող է ուշագիւր լինել . այն է իւր հովուի ձայնին և առաջնորդութեան ։ Երբ նա անզգալապէս հօտէն կըհեռանայ և վտանգի մէջ կըգտնուի, հովիւն կըկոչէ զնա, և եթէ լաւ ոչխար է նա անմիջապէս այդ կոչման հետևելով՝ իւր կեանքն վտանգէ կ'ազատէ . և միայն այն ճանապարհներովն և արօտավայրի այն կողմերն միայն յոր հովիւն զնա կառաջնորդէ՝ նա կեցրթայ, վստահ լինելով որ « ի վայրի դալարով և առ ջուրս հանգստեան » կըմնուցանէ զնա ։ Նա քաջ գիտէ որ գայլերէ և այլ և այլ գիշատիչ կենդանիներէ և առ հասարակ ամեն տեսակ վտանգներէ ու փորձանքներէ ազատուելու և

զերծ մնալու միակ և ամենաապահով ճանապարհն է՝ անպայման կերպիւ հնազանդել հովուին, նորա ձայնը լսելուն պէս՝ հետեւել նմա:

Արդ, հաւատացեալ եղբարք, ո՞չ ապաքէն մեր և մեր Աստուծոյ միջև եղած յարաբերութիւնն միեւնոյն է որպէս ոչխարաց և հովուի յարաբերութիւն: Ո՞չ ապաքէն եթէ մեր կամքին թողուի մենք կըլծարինք միայն մեր ցանկութիւններն ու կըքերն կատարել՝ առանց որ և է ուրիշ բարձրագոյն նկատումներ ունենալու, առանց զզուշանալու այն բազմատեսակ վտանգներէն ու փրասներէն որով մեր հոգիներն այս աշխարհի վերայ ամեն կողմէ շրջապատեալ են: Եթէ մեր կամքին թողնուի, մեր կըքերն յագեցնելու և մեր ապօրինի բաղձանքներին հասանելու համար ամենատեսակ անօրէնութիւններ ու անիրաւութիւններ կըբործենք, և կըկարծենք թէ այնու երջանիկ կեանք կըվարենք:

Իսկ եթէ մեր քաջ հովուապետի իսկական և սեփական ոչխարներն ենք՝ անպատճառ նորա ձայնին կըլսենք, ըստ ամենայնի նմա կըհնազանդինք և կըհաւատանք որ միայն այն ժամանակ կարող կըլինինք կատարեալ երջանկութիւն վայելել, երբ մեր բաղձանքներն ու ցանկութիւնն նորա կամաց համեմատ ուղղենք, երբ նա զմեզ կըձայնէ՝ անմիջապէս հետեւինք, երբ նա կըհրամայէ՝ անպայման կերպիւ հնազանդենք, երբ նա զմեզ կըկոչէ գնանք զկնի նորա՝ ամենայն վրստահութեամբ հաւատալով որ ամենալաւ և ամենաապահով ճանապարհն նորա կամքն է. «Ոչխարք իմ ձայնի իմու՛մ լսեն և ես ճանաչեմ զնոսա, և զկնի իմ գան. և ես տամ նոցա զկեանսն յաւիտենականս և մի կորիցեն ի յաւիտեան և մի ոք

յափշտակեցցէ զնոսա ի ձեռաց իմոց» : Այս է մեր Փրկչի աներկբայ խոստումն , և աւարակոյս չկայ որ ամեն քրիստոնեայ որ նորա ձայնին լսէ՝ անպատճառ նորա հովանաւորութիւն ու խնամարկութիւն կը վայելէ և թշնամին երբէք կարող չէ նմա վնասել :

Հաւատացեալ եղբարք ի Քրիստոս, թող ոչ ոք չկարծէ և չասէ թէ այժմ այլ ևս այդ հովուի ձայնն չի լսուիր : Այն օրուանէ երբ Ձիթենեայ լերան վերայ իւր ձեռքերը բարձրացուցած « հաւատիկ ես ընդ Ձեզ իմ զամենայն առաւ ամինչև ի կատարած աշխարհի » ասելով վերացաւ՝ մինչև ցայսօր մեր բարեխնամ Հովուապետի քաղցրիկ ձայնն երբէք չէ դադրած ճշմարտութեան ճանապարհ իւր հօտի ազանջին անընդհատ հնչեցնելէ : Իւր սուրբ Աւետարան ամէն օր եկեղեցւոյ մէջ աստուած ընտիր և երկնային օրէնքներ կ'աւանդէ , այն սուրբ կաթուղիկէ եկեղեցին , որոյ նաւակատեաց աօնն կը կատարենք այսօր՝ իւր հրեշտակային արարողութեամբք՝ զմեզ ժամանակ առ ժամանակ կրքարծրացնէ վաղանցիկ աշխարհիս սնտաի և սին հոգսերէն . իւր պաշտօնէից բերանովն կ'ուսուցանէ ըզմեզ աստուածահաճոյ կենցաղավարութեան օրէնքներ և հոգւոյ փրկութեան միջոցներ . մկրտութեան սուրբ խորհրդովն կ'ազատէ զմեզ Ազամային դատապարտութենէ և Աստուծոյ սրդեգիրներ կը լինէ զմեզ , սրբալոյս միւռոնի օծութեամբն կը կնքէ ու կը դրոշմէ մեր զգոյարաններն ի սպասաւորութիւն Աստուծոյ , Ս. Պատարագի անեղ խորհրդովն իւր փրկարար սուրբ մարմնոյ և արեան հաղորդութեամբն կը կերակրէ կը սնուցանէ մեր հոգիներն , և եթէ երբեմն իւր հաստատեալ ճանապարհէն շեղինք և մեղաց մէջ ընկնենք , այլ յետոյ զըջալով

զառնանք և թողութիւն խնդրենք՝ նա պատրաստ է իւր քահանայի միջոցաւ մեզ թողութիւն չընորհելու, և զմեզ մխիթարելով ու սփոփելով՝ առաքինութեամբ ապրելու հրահանգներ տալու։ Եթէ մենք հաւատարիմ ժողովուրդ լինինք, այս ամենի մէջ պիտի տեսնենք մեր Փրկչի առաջնորդող ձեռքն, և լսենք նորա քաղցրիկ ձայնն. մանաւանդ եթէ եկեղեցւոյ արարողութեանց և պաշտամանց որպէս և սրբազան խորհրդոց կատարման միջոցին սոսկ իբրև հանդիսատես չը լինինք, այլ հոգւով ու մարմնով զգանք, և քահանայի առաջնորդութեամբ ամենքս միասին մատուցանենք մեր բանաւոր պատարագն առաջի Ամենակալին Աստուծոյ, յայնժամ և միայն յայնժամ մեր երկնային Հովուապետի ձայնն աւելի բացարձակ և պարզ կերպիւ կը լսենք և նորա աստուածային կամացն վերահասու կը լինիմք։ Ահաւասիկ մեր Հովուապետի ձայնն էր որ ձեր նախորդներն և զձեզ յորդորեր և ներշնչեր է օտարութեան մէջ այս սուրբ եկեղեցին կառուցանել և աստուածային պաշտամանց և խորհրդոց կատարման համար հոգ տանիլ. նոյն Հովուապետի ձայնն է, որ զձեզ այսօր հաւաքել է այս սուրբ յարկի ներքոյ, որպէս զի նորա սուրբ անունն փառաւորէք և այստեղ քարոզուած աստուածային սուրբ բանին, և սուրբ սեղանի վերայ դրուած անմահ պատարագի մատուցմամբն և հաղորդութեամբն ձեր և ձերայնոց հոգևոր պէտքերն լցուցանէք։ Սոյն ձայնն է, որ այսօր իւր ծառայի միջոցաւ զձեզ կրկոչէ և կը հրաւիրէ ամէն կիւրակէ և որքան հնար է շաբաթամէջ եւս համախումբ ժողովուրդ այս սուրբ տաճարին մէջ, ձեր կենաց ամենէն նուիրական պարտաւորութիւններն կատարելու համար։

Քրիստոնէական այս ընդհանուր պարտաւորութիւններէն զատ կայ նա և մեզ հայազգի քրիստոնէիցս համար միմասնաւոր պարտաւորութիւն զոր այս աւուր հրաշալի տօնի աւթիւ և այս աւուր հանգամանաց ներքոյ ամենաազգու կերպիւ եկեղեցին մեզ կը յիշեցընէ: Իրաւ է, ուղղափառ քրիստոնէի և կաթողիկէ հաւատն ուր որ քարոզուի, ինչ լեզուաւ որ քարոզուի, ինչ ազգի մէջ կամ միջոցաւ որ քարոզուի՝ մարդկային ազգին հոգեոց փրկութիւն ընձեռելու միակ նպատակն պիտի ունանայ. իրաւ է, մեր սուրբ եկեղեցին երբէք այն յանդըզնութիւնն ունեցած չէ քարոզելու թէ՛ արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չիք փրկութիւն: Բայց Բարեբարն Աստուած իւր անհասանելի կամօքն զհայերս լուսաւորչաւանդ կաթողիկէ եկեղեցւոյն հովանոյն ներքոյ դրած է և մեր երկնային Հովուապետը մեզմէ յատկապէս կը պահանջէ որ մեք իւր բանաւոր հօտն՝ անպատճառ մնամք Հայաստանեայց եկեղեցւոյ սուրբ փարախին մէջ ուր նա զմեզ դրեր է, նորա անփոփոխելի կամօքն է որ մեր բոլոր հոգևոր պէտքերն հոգացուին այդ սուրբ փարախին մէջ և այդ սուրբ փարախի հովանաւորութեան ներքոյ դալար արօտավայրեր, ականակիտ աղբիւրներ շատ կան մեզ համար Հայաստանեայցս եկեղեցւոյ մէջ՝ լի բաւական մեզ և մեր սերնդոց կեանք և երջանկութիւն պարգևելու:

Արդարև այլևայլ քրիստոնեայազգաց վերայ այլևայլ տարբեր պարտաւորութիւններ դրուած են, բայց տարակոյս չկայ որ մեզ հայազգի քրիստոնէիցս վերայ Հայաստանեայց եկեղեցւոյն մինչև յետին հուատարիմ մնալու նուիրական պարտաւորութիւնը դրուած է: Ինչպէս մի ծնողասէր զաւակ սիրով և երախտագիտութեամբ կը յիշէ այն մայրա-

կան ստինքն ուրք զինքն զիեցուցին , մայրական
այն գութ ու գորովն որով իւր ծննդեան օրէն նորա
մայրն զնա խնամարկեր է , գիշեր ցերեկ , և՛ հի-
ւանդութեան և՛ առողջութեան միջոցին՝ իւր քուն
ու հանգստութիւն կտրելով՝ միայն իւր զաւակի
հանգստութեան համար հոգ տարեր է : նոյնպէս և
մեր զգացումն զէպի Հայաստանեայց եկեղեցին
այս պէտք է լինի . պէտք է որդիական երախտա-
գիտութեամբ յիշենք Հայաստանեայց եկեղեցւոյ այն
սուրբ աւաղան , որոյ մէջ մեք վերստին³ ծնանք ի
լոյս հաւատս Քրիստոսի , յիշենք մեր եկեղեցւոյ
Քահանայապետի ձեռքով սրբագործուած այն սուրբ
Միւռոնն , որոյ նշանաւ և միջնորդութեամբ՝ Ս.
Հոգւոյն շնորհացն արժանացանք , յիշենք այն հո-
գետր կերակուրն՝ Քրիստոսի սուրբ Մարմնոյ և Ա-
րեան հաղորդութիւնն որով մենք հոգւով կրկերա-
կրինք ու կըսնանինք . չմոռանանք երբէք և զանց
չառնենք Հայաստանեայց եկեղեցւոյ հրեշտակային
արարողութիւնք և պաշտամունք որով մենք զԱստ-
ուած կրփառաւորենք , այն գեղեցիկ ալօթքներն
ու երգերն որ գրեթէ առաքելական դարէն ի վեր
բաղմաթիւ հայրապետներ , հարք ու վարդապետք
եկեղեցւոյ , քահանայից և ժողովրդեան դասք գործ
ածելով նուիրագործեր ու զրեթէ Աստուածաշնչի
չափ սրբացուցեր են . հրճուինք և ոգևորուինք մեր
եկեղեցեաւն , մեր եղբայրներն ոգևորենք , և
սրտի մտօք հաւատանք թէ որքան սխալ լինի այն
վարդապետութիւն թէ արտաքոյ Հայաստանեայց ե-
կեղեցւոյ չիք փրկութիւն , այնու ամենայնիւ ճիշդ
է այն մէկ վարդապետութիւն թէ հայու փրկու-
թեան միակ գաւիթն է Հայաստանեայց եկեղեցին :

Արդ , սիրեցեալքդ իմ ի Քրիստոս , չպիտի կար-
ծենք թէ սոսկ երբեմնական յուզմամբ և խօսքով

կատարած պիտի լինինք մեր պարտաւորութիւն առ Մայրս մեր Հայաստանեայց սուրբ եկեղեցի . չպիտի կարծենք որ Հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ զաւակ լինելու համար միայն բաւական է որ չօտարանանք , օտար եկեղեցի չըյաճախենք , և յետ այնու մեր ի՛նչ անելու կամ ինչպէս ապրելու մասին բնաւ փոյթ չտանինք . շատ սխալ է այդ կարծիք , և՛ մեզ անհատապէս և՛ ընդհանուր եկեղեցւոյն վերին աստիճանի վտանգաւոր և վրասաբեր : Այս այն անտարբերութիւնն է որ ի ներքուստ Հայաստանեայց եկեղեցւոյն հիմուքն թուլացնելու , զնա արկարացնելու կրժառայէ , և աւա՛ղ որ արդէն ըստ կարի յոյժ տկարացուցած է , այս մեծ անտարբերութիւնն է որ աւելի վրասակար է քան արտաքին թշնամւոյն հարուածներն , քան թէ ամենասոսկալի հալածանքներն : Հայաստանեայց եկեղեցին հնազարեան մի սոսկ յիշատակ , մի պարզ ու անկենդան հնութիւն կը դառնայ , եթէ նորա զաւակունք իւրեանց կրօնական պարտաւորութեանց մէջ գաղջ ու անտարբեր գտնուին . նորա կենդանութիւն ու զօրութիւն կը կորսուի , նորա ազդեցութիւն կ'ոչնչանայ : Տեսէք ի՞նչ խրատ կ'աւանդէ մեզ մեր արեւգարգ սուրբ Հայրապետն այս առուր կարգացած Կոնդակոյն . «Պատուէր հայրական աւանդեմք Ձեզ , սիրեցէք զմիմեանս զի և Աստուած սիրոյ և խաղաղութեան բնակեցցի ի Ձեզ . պինդ կալարուք և նախանձախնդիր լերուք միշտ հայրենի օրինաց , կանոնաց և աւանդութեանց , ջերմ եռանդեամբ զուն գործեցէք պահել զմայրենի լեզու մեր՝ սըրբութեամբ աւանդելով որդւոց ձերոց ընդ արտաքին գիտութիւնս 'ի պատիւ և ի փառս Ազգիս և եկեղեցւոյ . հաստատուն կացէք ի հաւատն մեր և ի դաւանութիւնս զոր աւանդեցին մեզ երանաշնորհ հարքն մեր և հայրապետք» :—Հայաստանեայց ե-

կեղեցւոյ աւանդութեանց հաւատարիմ մնալ և մեր մայրենի լեզուն չմոռանալ՝ այս է մեր Հայրապետի պատուէրն: Հայերէնն բնականաբար մեր Հայաստանեայց եկեղեցւոյ հետ սերտիւ կապուած է, քանզի մեր եկեղեցւոյ միակ պաշտօնական լեզուն է այդ, և ով որ այդ լեզուին տեղեակ չէ, բնականաբար շատ քիչ բան կը հասկանայ արտաքին շարժումներէ և ձեակերպութիւններէ. նա երբէք չի կարող հոգւով սփոփուիլ և զգածուիլ, կամ եկեղեցւոյ մէջ կարգացուած աղօթից և երգուած երգոց միջոցաւ միտքն բարձրացնել առ Աստուած. Հայաստանեայց եկեղեցւոյն հաւատարիմ մնալու բարի ցանկութիւն ապարդիւն կը մնայ եթէ հայերէն չգիտէ, նորա բոլոր ջանքերն եկեղեցւոյ յառաջադիմութեան համար իզուր կ'երթայ եթէ հայերէնի ուսումն իւր ընտանեաց և իւր մերձաւորաց մէջ տարածելու հոգ չտանի:

Հարիւրաւոր տարիներէ ի վեր մեր Ազգն իւր ինքնուրոյն վիճակ կորուսած լինելով, մեզմէ շատեր իւրեանց հայրենի հողէն հեռանալու ստիպուած, կամ պարագայից բերմամբ պարտաւորուած հեռաւոր երկիրներ զաղթել, այս հարիւրաւոր տարիների միջոցին, ասել կ'ուզեմ, մեր ժողովուրդն կարող էր իւր ազգութեան բոլոր յասկանիչերն կորուսած լինել, եթէ Մայրս մեր սուրբ եկեղեցի ամեն մի հայ զաղթականութեան ետեէն չերթար, մեր սուրբ Խաչ ու Աւետարան չաանէր, մեր աստուածախօս լեզուան թշուառացեալ և տարագիր հայ ժողովրդեան հետ չխօսէր և զնա չմխիթարէր: Պէտք է չմոռանանք որ մեր Ազգի ամբողջ լուսաւորութեան, և յիշատակութեան արժանի այն ամենն որ քրիստոնէութեան առաջին դարէն մինչև ցարդ ունեցած է կամ ունի, որով նա քաղաքակրթութեան կամ լուսաւորութեան

կըմտենայ, լինի այդ կանոնաւոր լեզու, գրականութիւն, ճարտարապետութիւն, կամ բարեգործական և ուսումնական հաստատութիւն ևլն. այդ մէջը կը պարտինք միմիայն Հայաստանեայց եկեղեցւոյն: Ներկայ պարագայից մէջ ոչ ոք ինքզինքն հայ կոչելու իրաւունք ունի որ հայ եկեղեցւոյն ու լեզուին իրականապէս հաւատարիմ չէ. ոչ ևս մենք խմբովին զմեզ հայ Ազգ կոչելու և համարելու իրաւունք կունենանք եթէ մեր եկեղեցւոյ և լեզուի յատկանիշերովն չերևինք. քանզի ամեն մի ազգ կամ հասարակութիւն որոշ յատկանիշերով և որոշ հասարակային շահերով և եթ կարող է ինքզինքն ազգ կամ հասարակութիւն անուանել. և մեր ներկայեան հասարակային շահերն ու ազգային յատկանիշն է միմիայն մեր սուրբ եկեղեցին և նորա պաշտամանց մէջ գործածուած հայ լեզուն:

Ուստի թողնենք, որ խոր արմատ ձգեն մեր սրտերի մէջ մեր Հայրապետի այս աւուր տուած խրատն, զմեզ հեռի պահենք այն մոլութիւններէն որ ուրիշ հայ զաղթականութեանց կործանման և ոչնչանալու պատճառ եղած են. չթողունք անտարբերութեան որոմն մեր սրտերի և մեր յարկի ներքեւ մտնէ. մի՛ մոռանաք այս սուրբ տաճարն զոր կառուցեր էք, և ոչ թէ միայն ահն կիւրակի այլ նաև շաբաթամէջ ևս որքան հնար է յաճախեցէք և ձեր հոգևոր հովուի հետ միացէք ի փառաբանութիւն Աստուծոյ: Ստէպ աղօթեցէք առանձին ընդհանուր Ազգի համար, մեր սուրբ եկեղեցւոյ համար, Ազգիս Հայրապետին համար, աղօթեցէք ձեր և ձեր զաւակաց համար, աղօթեցէք նաև ձեր նորընծայ քահանայի համար, որ Բարերարն Աստուած նմա չնորհք և իմաստութիւն պարգևէ որ ճշմարտութեամբ և արդարութեամբ, անաչառ ոգևով և անձանձիր սրտով Քրիստոսի սուրբ Աւետարանն

քարոզէ ամեն կիւրակի այս սուրբ Բեմէն և զձեզ հոգևորապէս առաջնորդէ ըստ աւանդութեանց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ յարդարութեան ճանապարհն և ի կեանս յաւիտենականս :

Եւ ես իմ քահանայական անդրանիկ պաղատանքս կըմատուցանեմ առ Բարձրեայն Աստուած որ ձեզ ու ձեր զաւակաց հովանի լինի և օրհնելով օրհնէ և ձեր բարի գործոցն յաջողութիւն պարգևէ , ամենայն վտանգներէ ու փորձանքներէ զձեզ հեռի պահէ շնորհօք Սուրբ Հոգւոյն և Որդւոյն Միածնի . և նմա փառք յաւիտեանս . Ամէն :

ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍԱԽԱՆԴՈՒԹԻՒՆ

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ .

Երբ Տէրն մեր Յիսուս երեսուն տարեկան էր , նա սկսաւ այն գործն զոր գործելու եկած էր նախ քան զմահ և զյարուելիւն :

Նա յանկարծակի երևեցաւ Յորդանան գետի մօտ ուր Ս. Յովհաննէս կըմկրտէր Հրէաստանի ամեն կողմերէն իրեն դիմողներն :

Ս. Յովհաննէս մկրտութիւնն միմիայն ջրոյ մկրտութիւն էր . և ապաշխարութեան կամ մեղքերը զղջալու նշանակն էր : Տէրն մեր Յիսուս անձնապէս բոլորովին անմեղ էր . « Զի և Քրիստոս վասն ձեր մեռաւ . . . որ ոչն արար մեղս , և ոչ գտաւ նենդութիւն ի բերան նորա » : Եթէ այսպէս էր , ուրեմն զարմանալի չէ՞ որ Յիսուս անմեղ գոլով՝ ապաշխարութեան մկրտութիւն կըխնդրէ ի Ս. Յովհաննէս : — Պատճառն այն է որ ինքն կ'ուզէր մարդկային բնութեան օրէնքն անթերի կատարել . և ապաշխարութիւնն ևս որ համօրէն մարդկութեան համար օրէնք դարձած էր՝ ուղեց իւր վերայ առնուլ : Երբ Յովհաննէս կ'արգելու զնա , նա կը պատասխանէ . « Թո՛ղ տուր այժմ . զի այսպէս վայել է մեզ ընուլ զամենայն արդարութիւն » :

ԽՐԱՏԱԿԱՆ 1. Նա եկաւ կատարեալ Մարդ լինելու :

2. Նա եկաւ մեզ օրինակ լինելու . (ա) որպէս զի մեզ ուսուցանէ մեր պարտքն , (բ) և թէ այդ պարտքն ի՞նչպէս կատարելու է :

Տէրն մեր մկրտութիւնը սրբագործեց ,

1. Հրամայելով որ զայն կատարեմք , Մատթ. ԺԶ 15 :

2. Ինքնին մկրտուելով ի Յովհաննէս , Մատթ. Գ 13 :

Ղ.Սուգասու Աւետարանէն (Գ 21) կ'իմանամք որ Յիսուս՝ իւր մկրտութեան միջոցին կ'աղօթէր: Ինչքան անգամ կրկարգամք ի Ս. Աւետարանի թէ Յիսուս աղօթէր . օրինակի համար, —

- (1) Այլակերպութեան միջոցին (Ղուկ . Թ 18) .
- (2) «Հայր մեր»ը սորվեցնելէն յառաջ (Ղուկ . Թ 1) .
- (3) «Յանապատ տեղի» (Մարկ . Ա 35) .
- (4) Բորտը բժշկելէն յետոյ (Ղուկ . Ե 16) .
- (5) Գեթսեմանի պարտիզին մէջ (Մատթ . ԻՁ 39):

Որով կ'երևի՝ ամեն կարևոր գիպաց կամ ձեռնարկութեանց աւելի Տէրն Յիսուս սովոր էր աղօթելու առ երկնաւոր Հայրն իւր:

Թէպէտ և Յիսուս անձնապէս ծանօթ էր Յովհաննու, զի նորա ազգականն էր . բայց մկրտութեան միջոցին էր երբ զառաջինն ճանաչեց զՅիսուս իբրև Միսիա և Փրկիչ աշխարհի որ գալոցն էր: Եւ նօթութեան նշանն էր Ս. Հոգին որ իջաւ նորա վերայ աղաւնւոյ կերպարանքով, և աստուածային ձայնն որ ի յերկնից լսուեցաւ . «Դու ես որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ»:

Ուրիշ երկու անգամ ևս Աստուծոյ ձայնը լսելի եղաւ Բրիտանոսի երկրաւոր տնօրէնութեանց ժամանակ . —

- (1) Այլակերպութեան միջոցին (Ղուկ . Թ 29) .
- (2) Նախ քան զշարչարանն (Յովհ . ԺԲ 28):

Նկատելի է որ իւրաքանչիւր անգամ ձայնը լսուեցաւ մինչ Բրիտանոս կ'աղօթէր:

Ս. Հոգին ուրիշ անգամ ևս երևեցաւ, աւուրն Պենտեկոստէի, և նստաւ Առաքելոց վերայ իբրև հրեղէն լեզուս:

Աստ նկատելի է Ս. Երրորդութեան վարդապետութեան հաստատումն . Հայրն Աստուած խօսի ի յերկնից, Որդին Աստուած մկրտի իբրև մարդ, Ս. Հոգին Աստուած իջանէ իբրև աղաւնի:

Նոր կտակարանի մէջ ուրիշ անգամեր ևս Ս. Երրորդութեան երեք Անձինք յիշուած են ի միասին: Թրինակի համար, Յովհ . ԺԳ 16, Բրիտանոս կ'ասէ . «Եւ ես աղաչեցից զՀայր, և այլ Միքսարիչ տացէ ձեզ, զՀոգին ճշմարտութեան»: — Մատթ . ԻԲ 18, Յիսուս կը պատուիրէ իւր աշակերտաց՝ ուսուցանել զամենայն հետանոս, և մկրտել զնոս «յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ»: — Բ. կորնթ . ԺԳ 13, Ս. Պօղոս կ'աւարտէ իւր թուղթ . «Շնորհք Տեսն մերոյ Յիսուսի քրիստոսի, և սէրն Աստուծոյ . և հաղորդութիւն Հոգւոյ Սրբոյ ընդ ձեզ ամենեսին»:

Նկատելու է որ Յովհաննէս կրկարանի, և սկիզբէն չի ուզեր զայն ընդունել ի մկրտութիւն ապաշխարութեան, վասն զի, կ'առարկէ Յովհաննէս, «ինձ պիտոյ է ի քէն մկրտիլ»: Ընդէ՞ր .

- 1. Վասն զի նա կը ճանաչէր զՅիսուս իբրև սուրբ ոմն .
- 2. Եւ գիտնալու էր որ իբրև Միսիա Սուրբ Հոգով մկրտելու պաշտօն ունէր:

Մեր Եկեղեցին Մկրտութեան մասին ի՞նչ կ'ուսուցանէ :

1. Յիսուս Յորդանան գետի մէջ մկրտուելով՝ ջուրը նուիրագործեց իբրև խորհրդաւոր միջոց մեղաց քաւութեան և թողութեան :
 2. Սուրբ Աւագանի Մկրտութեամբ իւրաքանչիւր հաւատացեալ (ա) կը գնուի (այսինքն , ծախու կ'առնուի) «Արեամբն ֆրիստոսի ի ծառայութենէ մեղաց , (բ) ընդունի զորդեգրութիւն Հօրն երկնաւորի , (գ) լինիլ ժառանգակից Բրիստոսի , (դ) և Տաճար Հոգւոյն Սրբոյ :
- ԱՍՓՈՓՈՒՄՆ 1. Երբ Տէրն մեր երեսուն տարեկան էր , եկաւ ի Յորդանան գետ մկրտիլ ի Ս.Յովհաննէ :
2. Ս. Հոգին իջաւ նորա վերայ իբրև աղաւնի . և Հայրն Աստուած խօսեցաւ ի յերկնից :
 3. Յիսուս այդու Ս. Մկրտութիւնը նուիրագործեց :
 4. Յիսուսի մկրտութիւնն՝ Ս. Հոգւոյ մկրտութիւն էր , և ոչ թէ մեր մկրտութեան պէս մեղաց քաւութեան և թողութեան համար :

Ո . ՔԸ . Ղ .

ՅԻՍՈՒՍ ՈՐՈՒՑ .

Յիսուս Որդի ծագումն անճառ 'ի Հօրէ ,
 Որ կամովին յերկիր իջեր 'ի յերկնէ ,
 Եւ զմարդկային Դու ըզմարմին ըզգեցար ,
 Եւ յաշխարհի աստ ընդ մարդկան շրջեցար :—

Պատգամս անտի զԱստուածային Դու բերեր ,
 Եւ զայնս մարդկան ճշմարտութեամբ ուսուցեր ,
 Դու զմիտս նոցին ուղղեցեր անդր 'ի յերկինս ,
 Պաշտել ըզԻեզ , որ 'ի սրբում կաս լերինս :—

'ի յերկրի աստ՝ Դու ընտրեցեր զԱռաքեալս ,
 Որք 'ի Հոգւոյն Սրբոյ էին առլցեալս ,
 Ընդ ծագս համայն գնացին նոքա աշխարհի ,
 Եւ ուսուցին զօրէնս քո սուրբ ևւ բարի :—

ՅԱռաքելոց անտի էր Սուրբ Թադէոս ,
 Եւ ընդ նրմին Բարթուղիմէ հոգելոյս ,
 Որք զընացին 'ի մերն աշխարհ Հայաստան ,
 Անդ երկոքին քարոզեցին միաձայն :—

Եւ մեր արքայ՝ Վեհրն Աբգար յիւր ախտէն ,
 Բըժշկեցաւ , հաւատալով Յիսուսին ,
 Որ եւ եղեւ զեր օրինակ մեր Ազգին ,
 Ձի բազմութիւնք յօրէնս դարձան Միած-
 նին :—

Յայնքմ հետէ հաստատեցաւ անխախուտ
 Եկեղեցի Հայաստանեայց 'ի Վերուստ ,
 Որ անասան կացցէ մնացցէ ցըվախճան ,
 Եթէ Ազգ մեր հոգւով մնացցէ միարան :—

Մածինդ Հօր , Քոյով փառօք աստուածեան
 Յերկնից իջեր յեկեղեցին Արամեան ,
 Էջմիածին ուստի կոչի յայնմ օրէ ,
 'ի Հայկական նախնէ տեղէն 'ի մերմէ :—

Եկեղեցիդ այդ է կեդրոն մեր կրօնին ,
 Ուր աչք հոգւոյ որդւոց Հայկայանդր հային ,
 Ուստի օրհնեա՛ եւ զայն պահեա՛ անաս-
 սան ,

Եւ լի՛ ց շնորհօքդ զորդիս նորին զամենայն :—

Քեզ պաշտեսցեն Հայկայ որդիք տարազրեալ ,
 ՁՔեզ օրհնեսցեն զԱստուածորդիդ մարմնա-
 ցեալ ,

Եւ մեծապին եւ ճոխապին Քոյդ շնորհօք ,

Եւ երկնային եւ երկրաւոր Քոյդ բարեօք :—

Եւ ուրանօր տարազրեալ գաղթեսցեն ,

Անդ կանգնեսցեն Քեզ վայելուչ Տուն
 Քոյին ,

Եւ համօրէն Եկեղեցիք մեր Ազգին ,

Եկեղեցի Հայաստանեայց կոչեսցին :—

Յօրինեաց Մ. Յ. ՋՕՐԱԲԵԱՆ .

'ի Բաթաւիա 'ի Ջալա կղզւոջ 16 Ագօստ 1900 .

Այս բերրուածը կըրիատարակենք ոչ միայն իւր գրական արժանեաց համար ,
 այլ առաւելագէս նորա համար որ Ջաւայի հեռաւոր երկրի մէջ բնակող հե-
 ղինակն Հայաստանեայց Եկեղեցւոյ սէրն իւր սրտի մէջ անշէջ պահած է , եւ
 պանդխտութեան եւ անհամար օտար պարագայք կարող եղած չեն նորա ըզ-
 գացումներն դէպ ի իւր հոգւոր ծնօղն նսեմացնել : Յուսամք որ իւր Ջաւացի
 բոլոր պանդխտակիցք նոյն զգացումն ունին :

ԾԱՆ. ԽՄԲ .

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

Սիրելի Եղբայր 'ի Քրիստոս .

Ձեր նամակն եւ «Եկեղեցի Հայաստանեայց» կրօնաթերթի ամսալին եւ երկրորդ թիւերն ստացայ . . . : Ըշնորհաւորեմ Ձեր այդ յոյժ պիտանի եւ օգտակար ձեռնարկն եւ կրօնական յաջողութիւն յայնմ : Մնամ, եղբայրական սիրոյ ողջունիւ ,

ՅՈՎՍԷՓ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդութիւն Հայոց Միացեալ Նահանգացն Ամերիկայի
24 Մայիս 9100

ՆԱՄԱՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

Արժ . Պատուական Խմբագիր Եկեղեցի Հայաստանեայց ամսաթերթի . —

Ողջոյն Ձեզ, հայր խմբագիր, որ աշխատիք իրբեւ հրապարակախօս քարոզիչ, բանիւ եւ գործով կրթել ժողովուրդն քրիստոնէութեան ճշմարիտ լուսաւորութեամբ եւ դաստիարակութեամբ : Ձանացէք նախապաշարեալ մտքերի ազիտութեան խաւարը զգուշութեամբ փարատել . այս է մեր ամենի սեպուհ պարտքն :

Կրօնական ամսաթերթիդ չորս թիւերը ստացել եմ եւ ամենայն հաճութեամբ կարդացել : Ուստի կըխնդրեմ իմ անունս անց կացնէք բաժանորդների ցուցակում, որոյ արժէքն

Մաղթելով կար եւ զօրութիւն 'ի Տեառնէ, մնամ Աղօթակից ,

ՍԱՅԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Արպատականի Թէմն Առաջնորդ Հայոց .

Առաջնորդարան Հայոց, Դալրեժ, 13 Յուլիս 1900 .

Արժանապատիւ Տէր Հայր ,

Անկորուստ ստացած եմ Ձեր հրատարակած «Եկեղեցի Հայաստանեայց» կրօնական եւ սոստուածաբանական պատուական Հանդիսի Ազրիլի եւ Մայիսի համարներն եւ շատ հետաքրքրութեամբ կարդացած եւ բարեկամաց եւ սուտած եւ յորդորած եմ որ կարգան ուշադրութեամբ : Ձեր

Կ. Պօլիս եղած ժամանակում հրատարակած համարներն եւս ժամանակին շատ հետաքրքրութեամբ կարդացած էի, եւ այդ հանդիսի առժամանակեայ դադարումն մեծ ցաւ պատճառած էր ինձ, քանի որ զժբախտաբար մեր մէջ չունէինք մի ուրիշ կրօնաթերթ որ մեր ժողովրդեան հոգեւոր պէտքերը լցուցանէր: Հետեւաբար անհուն էր ուրախութիւնս երբ ստացայ կրօնաթերթի առաջին համարն: Ուստի փութամ այսու շնորհաւորել Ձեզ 'ի բոլոր սրտէ, եւ մաղթել վասն Ձեր 'ի վերուստ կարողութիւն եւ զօրութիւն, եւ յարատեւութիւն վասն Հանդիսիդ: Յոյս մեծ ունիմ որ լաւ ընդունելութիւն պիտի գտնէ Ազգիս մեծամասնութեան կողմից, որով եւ շարունակէք Ձեր գնահատելի ծառայութիւններն մեր ատապետալ Ազգին եւ բազմաչարչար Եկեղեցւոյն:—Մնամ, եւ այլն.

ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Պ. ՅԱԿՈԲՅԱՆԵԱՆ

Նոր—Ձուղա, 10-23 Յունիսի 1900.

ՆԱՄԱ՛յ Կ. ՊՕԼՍԷՆ

Արժանապատիւ Հայր Տէր Թորոս Քահանայ Ձուղայեցի.

Յաւիտեան չպիտի ջնջուի վրայէս այն վսեմ ապաւորութիւնը զոր կրած եմ ընթերցմամբ «Հայ. Եկեղեցի» Հանդիսին, որը որ ասկէ բաւական տարիներ առաջ ետամսէի մը համար միայն առ 'ի փորձ հրատարակեցիք, ու չ'յարատեւեց զժբազդաբար:

Առաջին անգամն էր որ իր պաշտելի անունին արժանի այդպիսի հրատարակութիւն մը կը կարդայի: Որչափ որ կը յիշեմ սակայն, ան ատենը ըսուեցաւ թէ սեւ նախանձ զայրացած է ձեզի դէմ, ու զՁեզ ցրտացուցած Ձեր առաջադրութեանէն. եւ ահա «Խոսնակ» մը դուրս եկաւ անոր յաջորդ. Խոսնակը «Սոխակ» եղաւ, ուչ մնացած էր ազտաւին կարգը՝ երբ այլ եւս դադրեցաւ այդ անհասկանալի մրցումն: Ձուղայեցին լոած էր վերջապէս, հազիւ անուշիկ ճաշակ մը ծաւալած հոգեւորին մշակութեան:

Բոլոր կենացս մէջ այդ կարգի հրատարակութեանց եւ ո՛չ մին այնքան դիւթած է հոգիս, որչափ Ձեր այն թերթերն որք մի զարմանալի յիշատակ արձանացուցած են մտքիս մէջ, սիրելի Ձուղայեցի, ու ամեն օր ինձ յիշել կուտան զՁեզ: Փափագեցայ այն ատեն զՁեզ ան-

ձամբ ալ ճանչնալ Պօլսոյ մէջ, ու շնորհաւորել այս նոր իմն Շնորհալին, եւ չկրցայ: Հետեւեցայ մտօք Ձեզի երբ մեկնեցաք 'ի Ս. Երուսաղէմ, որ իմաստուն գտնուեցաւ զՁեզ իր մէջ ունենալու բազդին արժէքը գիտնալ. հոն օգտակար չըջան մը բոլորելով՝ Ս. Էջմիածին ալ գտնուեցայք պաշտօնով, ուր վերջապէս կոչուեցաք 'ի քահանայութիւն Եկեղեցւոյն ում նուիրեցայք՝ Ձեր ստացած բարձրագոյն դաստիարակութեան բոլոր անժանիքովը որ կը փայլէր Ձեր գեղեցիկ ու շինիչ քարոզներուն ու մեկնութեանցը մէջ:

Անկարելի պիտի լինի ինձ մոռնալ Աղօթքի, Պահոց, Սրբոց բարեխօսութեան, Ս. Պատարագին. յատկապէս Որ օրհնես զայնոսիկ» անննան (Ձեր բառոյն) աղօթքին, եւ Մեծի պահոց կիրակիներու ճաշու աւետարաններուն ըստ պատշաճի աւուր բացատրութեանց այն գեղեցիկ յօգուածներն. եւ ցայսօր, ամեն անգամ որ կը գտնուիմ Եկեղեցին հանդիսաւոր պաշտամունքի մը, գիտես թէ առնթեր ունիմ միշտ Ձուզայեցին ու հետը բաժին կընեմ Հայ. Եկեղեցւոյ որդի գտնուելու փառքը: Կ'աւաղէի այն օրէն ցայսօր թէ ինչու՞ զուրկ ենք անանկ կրօնական Հանդիսէ մը. թէ գոնէ Ձուզայեցին մերթ ընդ մերթ ինչու՞ չերեւիր գրական ասպարէզը, որ մնացած է անլի ճամարտակութեանց իբր թէ կրօնական նիւթերու վերայ գրուած: Ազգային լրագրութեան մէջ մերթ ընդ մերթ Դուք ալ զժբազդութիւնն ունեցած էք կարգալու այդպիսի գրուածներ:

Բարեբաղտարար ասկէ մէկ երկու ամիս առաջ Ազգիս վեհ. Հայրապետին մի կոնզակը կը խրախուսէ զՁեզ շարունակել «Եկեղեցի» կրօնաթերթը, եւ մեծ եղաւ 'խնդութիւնն իս' կարգալով վերսկսումն արդէն, ու մէկ երկու թիւերն ալ ելած են:

«Արեւելք» օրաթերթին 4323 թուոյն մէջ Շ. Շաւարշ ստորագրութեամբ քննադատական մը երեւցաւ Ձեր Հանդիսին նորագոյն այդ երկու թիւերուն վերայ գրուած. զարավերջիկ մեր անտանելի իմաստակներէն միսք գրուածը. հիւանդ հոգւոյ մը դարչ շունչը անցած է ամբողջ գրուածքին վրայէն. կեղծաւոր անհաւատութեան մը պատկեր:

Ողորմելի քննադատն (եթէ կ'արժէ կոչուիլ քննադատ մը) իմաստ ու հոգի չփնտոեր կարգացածին մէջ, այլ պերճախօսութիւն ու սեթեւեթեալ բանաձեւեր թերեւս. խօսելու դաս կուտայ Ձեզի, որ Գրիստոսի լեզուաւը

խօսիք մեզի, եւ այլն. եւ այլն. խօսքը չընէր բնաւ Ձեր հանդիսին նախկին թիւերուն, ուր լեցուն են բոլոր իր փնտռած դասերն ու մեթոտներն, զորս իր սպասածէն ալ բարձր պիտի գտնէր: Բայց այդպիսիք կեանքերնուն մէջ ըստէ մը իսկ չեն ուզեր նուիրել այդ կարգի վերծանութեանց. ափեզ ցփեզ մէկէն 'ի մէկ դէմ ելլել գործի մը, գրուածքի մը, առանց զատելու կարողութիւնն ունենալու, տեսակ մը անկիրթ հաճոյք ըրած են իրենց: Գէթ այդ պարոնն ունեցած է քաղաքավարութիւնը խոստովանելու սակայն Ձեր ներհուն հմտութիւնն, եւ անժըխտելի արժանիքն:

Իբրեւ որդի հարազատ Հայոց Ս. Եկեղեցւոյ եւ նախանձաւոր Անոր ու իր արժանաւոր պաշտօնէից պատուոյն, իբրեւ հիացող մը Ձեր վերայ որ պարծանք էք Եկեղեցւոյ, խորին վիշտ կը յայտնեմ ասանկ գրուածքի մը համար:

Անպատ հոգիի մը պատկերը, սկիստիկի խղճահարումն է այդպիսի գրուած մը. իրաւ թէ կը փնտռէ այն թուած շնորհները, բայց գրուածներով ու քարոզներով չէ որ պիտի յաջողի գտնել, որչափ զղջմամբ ու խորին հաւատով, եւ մաքրելով ու պատրաստելով միտքն ու սիրտը՝ Աստուծոյ շնորհաց ազդեցութիւնն ընդունելու համար:

Ընդունեցէք խորին յարգանքս, որով մնամ, սիրելի Հօրդ Հոգեւորի, անձնուէր որդի.

ՅԱԿՈՒ ՁԻՐԱՔԵԱՆ

ՆԱՄԱԿ ՁԱԽԱՅԷՆ

Արժանայարգ եւ Սրբակրօն Եղբայր,

Մեծ եղև ուրախութիւն սրտիս երբ անցեալ օր բազմ ունեցայ տեսնել առաջին թիւը «Եկեղեցի Հայաստանեայց» անուն կրօնական ամսաթերթիդ զոր սկսած էք հրատարակել 'ի Մանչէսթր, անտարակոյս լրացնելու համար այն անհրաժեշտ պէտքը մի կրօնական հանդիսի, որում երկար ժամանակէ 'ի վեր զգալապէս կարօտ եղած էր բաշմաչարչար ու հալածուած սուրբ Եկեղեցին մեր Հայաստանեայց:

Մատուցանելով Ձեզ սրտագին շնորհաւորութիւններս վասն սոյն եկեղեցաչէն եւ ազգօգուտ յոյժ կարեւոր ձեռնարկին, փութամ ներկայիւս խնդրել 'ի սրբութենէդ որ հաճիք առաքել 'ի սմին նշանակեալ հասցէից իրաքաչիւրին մի մի օրինակ պատուական հանդիսէդ՝ սկսեալ

առաջին թիւէն , որոյ տարեկան բաժանորդագինն , Մի եւ նոյն ժամանակ մաղթելով 'ի Տեառնէ յաջողութիւն վասն հրատարակութեանդ . որ նպատակ ունի արծարծել քրիստոնէական կրօնի ոգին , եւ իւր հոգեշունչ պարունակութեամբ հրահանգել մեր Առաքելական Եկեղեցւոյ սիրելի զաւակունքն 'ի ճշմարիտ վարդապետութեանս կրօնի եւ յուսումն կենսատու բանից Քրիստոսի Ս. Աւետարանին , եւ 'ի հոգեւոր շինութիւն որդւոց մօրն լուսոյ կաթուղիկէ Եկեղեցւոյս մերոյ :

Մնամ , բարեմաղթու եղբայր 'ի Տէր ,

ՎԱՐՈՒԱՆ ՔԶ . ՎԱՐՈՒԱՆԵԱՆ

Վիճակաւոր քահանայ Ս . Յովհաննու Եկեղեցւոյն
բաժախա քաղաքի որ ի Զաւա .

ՆԱՄԱԿ ԶՄԻՒՌՆԻԱՅԷՆ

Ս. ԳՐՈՅ ԱՌԱՋԻԿԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Տէր Խմբագիր , — Հաճութեամբ կարգացի ազգային լրագրաց մէջ Վեհ . Հայրապետի օրհնածէր կոնդակն 'ի մասին հրատարակութեան Աստուածաշունչ Ս. Գրոց 'ի Ս. Էջմիածին , որ պիտի կատարուի 'ի մօտոյ մաքուր թղթի վերայ եւ պատկերազարդ , եւ այս առթիւ Վեհ . Կաթուղիկոսն յորդոր կըկարգայ բարեպաշտ հայ ժողովրդեան մասնակցիլ նիւթապէս սոյն աստուածահաճոյ գործին , եւ կըխոստանայ ամեն դասակարգի գիւրամատչելի ընելու համար դուզնաքեայ գին մը նշանակել : Նոյնպէս ուրախութեամբ կարգացի ձեր խմբագրականն որով նոր տպագրելի Ս. Մատենի համար օգտակար առաջարկներ կընէք :

Արդարեւ տպագրութեան գիւտէն զկնի ոչինչ գիրք այնքան շատ անգամ տպագրուած է գրեթէ ամեն փոքր 'ի շատէ գիր ու գրականութիւն ունեցող լեզուաւ որքան Աստուածաշունչն , այլ եւ այլ ընկերութիւններ հաստատուած են որք Աստուածաշունչի տպագրութեամբ տարածուին իւրեանց միակ բան ու գործ ըրած են , եւ թէպէտ մեր Ազգի մէջ ալ բազմիցս տպագրուած է 'ի Վեհնեաիկ , 'ի Կ. Պօլիս , 'ի Ս. Պետրբուրգ եւ այլուր , սակայն դժբախտաբար մինչ ցարդ մեր Ս. Եկեղեցւոյ հիմն եղող այդ Ս. Գիրքն իւր ամբողջութեամբն մեր Մայր Աթոռոյ տպարանին մէջ եւ Ազգիս Վեհ . Հայրապետի

օրհնութեամբ եւ դրոշմով հրատարակուած չէր: Հարկաւ շնորհակալ ենք Վենետիոյ Մխիթարեան Միաբանութենէն որպէս եւ Ամերիկեան եւ Անգղիական Ս. Գրոց Ընկերութիւններէն որ մեզ համար թէ մեր նախնեաց թարգմանութիւնը եւ թէ աշխարհիկ լեզուաւ Ս. Գիրքն բազմիցս տպագրած են: Բայց եւ այնպէս չենք կարող ուրանալ թէ ի՛նչքան ամօթ կըզգայինք օտարաց առջեւ, երբ մեր Եկեղեցւոյ եւ մեր փրկութեան աղբիւր եզող Ս. Գիրքը կաթօլիկներէ եւ բողոքականներէ փոխ առնելու ստիպուած էինք: Յետայտու, շնորհիւ մեր Հայրապետի հայրական հոգածութեան ամեն հայ պիտի կարենայ պարզ երես իւր Եկեղեցւոյ պաշտօնական հրատարակութեամբ տպագրելալ Աստուածաշունչն իւր տան մէջ ունենալ եւ իւր ընտանեաց մէջ կարգալ:

Զմիւռին, Յունիս 1900 .

ՄԻՇՐԱՆ ՄԵԼԻՔԵԱՆ

